



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՅ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ
 ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՐՂՈՎԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
 ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՈՒ ՅԱՆԴԻՊՈՒՄ**

Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու Առաջնորդներու խորհուրդը, յանձինս Հայ Առաքելական Եկեղեցւոյ զոյգ առաջնորդներուն՝ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ Գերշ. Ս. Յովսէան Արք. Տերտերեանի, Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Ս. Սերափիոն Եպիսկոպոսի, Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդ Գերշ. Ս. Եուճին Զափլան Արքեպիսկոպոսի, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առթիւ, հանդիպում մը ունեցան եւ այդ առթիւ եղբայրական բարեմաղթութիւններ փոխանակեցին: Հանդիպման կը մասնակցէին նաեւ Անտիոքի Ուղղափառ Եկեղեցւոյ Առաջնորդ՝ Գերշ. Ս. Ժօզէֆ Չահլաւի, ինչպէս այլ եկեղեցականներ:

Երկուշաբթի 15 Յունուար, 2007-ին, առաւօտեան ժամը 12-էն յետ միջօրէ ժամը 2:00, հիւրընկալութեամբ Ղըպտի Ուղղափառ Եկեղեցւոյ առաջնորդ՝ Գերշ. Ս. Սերափիոն Եպիսկոպոսի, Ս. Մօրիս Առաջնորդանիստ կեդրոնին մէջ եկեղեցական կարճ արարողութիւն մը տեղի ունեցաւ, որու ընթացքին իւրաքանչիւր եկեղեցի իր եկեղեցականներու մասնակցութեամբ, իրենց ժամակարգին ու եկեղեցւոյ աւանդութեան՝ Աստուծոյ յատուկ աղօթք եւ օրհնութիւն վերառաքեցին:

Հաւաքական սիրոյ ճաշէն ետք տեղի ունեցաւ մտերմիկ գրոյց Առաջնորդներուն միջեւ, որոնք ընդհանրապէս անդրադարձան եւ խորհրդակցեցան Առաքելական Ուղղափառ եկեղեցիները յուզող այժմեական խնդիրներու՝ վարչական, կրօնադաստիարակչական, պատանեաց թէ երիտասարդական հարցերու շուրջ:

Ուղղափառ եկեղեցիներու առաջնորդներու յաջորդ հանդիպումը հիւրընկալութեամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Բարձր. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, Փետրուար 6-ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

**MEETING OF THE COUNCIL OF ORIENTAL ORTHODOX BISHOPS OF
 THE WESTERN UNITED STATES**

On Monday, January 15, the first meeting of 2007 of the Council of Oriental Orthodox Bishops of the Western United States took place at St. Maurice Coptic Orthodox Diocese of Los Angeles. The meeting was hosted by H.G. Bishop Serapion of

the Coptic Orthodox Church, with the participation of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Hovnan Derderian, Primate, H.E. Mor Clemis Eugene Kaplan of the Syriac Orthodox Church, and H.G. Bishop Joseph Al-Zehlaoui of the Antiochian Orthodox Church.

The gathering began with morning services, during which prayers and blessings were offered according to the traditions of each church. Following a reception, the Prelates met to discuss matters of concern to Oriental Orthodox Churches, ranging from administrative issues to Religious education and youth activities.

The next meeting of the Council of Oriental Orthodox Bishops is scheduled to take place on Tuesday, February 6, at St. Mary's Armenian Church in Glendale hosted by Archbishop Moushegh Mardirossian.